ԲՈԼՈՐԸ.– Գնանք: (Դառնում են դէպի Սենեկապետը եւ գլուխ տալիս) Տէր ի՛մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Նրանց գլուխ տալով) Տէր ի՛մ:

Հեռանում են եւ ծածկւում պատի հետեւը: Սենեկապետը դուրս է գնում եւ իսկոյն վերադառնալով՝ ետ է անում դռան վարագոյրը: Ներս է մտնում Ուստիանը թագուհու զգեստներով եւ ծանր ու բարակ, լուրջ, գալիս նստում է թախտի վրայ: Սենեկապետը կծկւում է վարագոյրի մօտ: Դուրսը անորոշ աղմուկ է լսւում: Սենեկապետն շտապում է այն կողմը:

ՄՈՒՆԵՏԻԿԻ ՁԱՅՆԸ.– Ահազանգ, զարթի՛ք կոչնա՛կ… (Լսւում է փողերի ձայն:)

ՆԱԶԱՐ.– (Ներս է վազում, Սաքոն նրա հետեւից:) Գեադա, էս ի՞նչ է: Ա՛ կնիկ, էս ի՞նչ բան է:

ՈՒՍՏԻԱՆ.– Չեմ իմանում,

ՆԱԶԱՐ.– (Սաքոյին) Մի տես ի՞նչ եղաւ:

ՍԱՔՈ.– (Վախենալով մօտենում է վարագոյրին եւ հանկարծ դուրս գնալով՝ կծկւում է վարագոյրի հետեւը, այնպէս որ երեւում է նրա այնտեղ լինելը:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս վազելով) Բազո՛ւկ յաղթութեան, սուրհանդա՛կ:

ՍԱՔՈ.– (Ներս է վազում նրա հետեւից) Ղիամաթ է:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ ղիամաթ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ուզում է ասել՝ այլայլումն:

ՆԱԶԱՐ.– Գնացէք, կարգին բան իմացէք, (Սաքոն եւ Սենեկապետը դուրս են գնում, ներս են վազում Նազիր-վեզիր, զօրավար եւ այլ պալատականներ) Ի՞նչ կա: Ի՞նչ ղալմաղալ է:

ՆԱԶԱՐ.– Թագաւոր քաջ, սուրհանդակ եկաւ եւ յայտնեց, որ թշնամի թագաւորները թուով տասն, խախտելով ուխտը հարեւանութեան, զօրք են կապել եւ հարաւից, հիւսիսից, արեւելքից եւ արեւմուտքից առաջ են խաղում մեր երկրի վրայ:

ՆԱԶԱՐ.– Է, թագաւոր եղանք պրծանք: Էլ ի՞նչ են ուզում: Նոր բան կա՞:

ՆԱԶԱՐ.– Ուզում են մեր պետութիւնն ու թագը խլել:

ՆԱԶԱՐ.– Թագը խլե՞ն, Ո՞նց թէ…(Հանելով թագը եւ տալով Սենեկապետին) Գեադա, տար պահի: Շանց կտամ դրանց թագը: (Սենեկապետը առնում է թագը եւ տանում:)